

ՊԱՅՄԱՆՔ

Յարեկան գին և Պոլսոյ 8 ՄԷՃ.
Պաւառաց 40 ՄԷՃ.
Վեցամեայ և Պոլսոյ 4 ՄԷՃ.
Պաւառաց 3 ՄԷՃ.
Իւրաքանչիւր թերթի գին 60 փոյ.
Յանուարի տոգը մէկ անգամի հա-
մար 3 դուրուշ, երկու անգամի հա-
մար 2 դուրուշ, երկու անգամի երեք
համար դատ սակարկութիւն կըլլայ:



Լ Ր Ա Գ Ի Ր

ՔԱՂԱՔԱԿԱՆ ԱԶԳԱՅԻՆ ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ ԵՒ ՏՆՏԵՍԱԿԱՆ

ԿՈՍՏԱՆԴՆՈՒՊՈԼԻՍ 18 ԱՊՐԻԼ

ՔԱՂԱՔԱԿԱՆ
ՎԵՐՋԻՆ ԼՈՒՐԵՐ

Աղէքսանդրիա 26 ապրիլ.
Բ. Գուրուշ հրաման դրեալով իւր-
տիպին, որ Սուլթան Զոհրաբին
գրուէ, Պ. Տը Լեւոն համեմատ նաւա-
ւորի յանձնարարութիւն սահմանած սա-
կաղինը ամսոյ 29-ին սկսեալ դործադ-
րել. բայց միանգամայն կը յայտնէ թէ
իր իրաւունքներն ալ իրեն կը վերադա-
նէ, այն կերպով որ խնդիրն անվճար
ներկայանայ բաժանորդաց ընդհանուր
ժողովոյն, որ քիչ ժամանակէն պիտի դու-
սարի:

Պիլիպոս 27 ապրիլ.

Միւսնո իշխանը պաշտօնէն իւր-
դոյ նախագահին և բաղնիքի ուղեկցաց
հետ այս առաւուռ ձմեռաց կըլլաւ և Պոլս
երթալու համար:

Պիլիպոս 27 ապրիլ.

Իրադիրներն Արեւիկայի մասին
յայտնուեցան իւրեք ծառայողներու
կողմէն վրայ ցաւ յայտնելով կը մեղադ-
րեն այն յայտնուեցան իւրեք:

Մարտի 27 ապրիլ.

5000 ֆարսիսներ չիւնէր և վարան-
սիա քաղաքները մասն:

Ապրիլ 27 ապրիլ.

Խորհրդարանին նախագահը նախա-
նորաց հրամարումը պաշտօնակա ծա-
նոց: Դեռ ոչ ոք յանձն առած է նոր
նախարարութիւն մը կազմելու գործը:

Լեւոն 27 ապրիլ.

Ռուսիոյ կայսրը մայիս 1/15-ին հոս պի-
տի հասնի:

Պիլիպոս 28 ապրիլ.

1875-ի երկուստեան հաշուեցոյցը 21 մի-
լիոն թաւերի յաւելումով ցոյց կուտայ, որ
պարտուց զլիսավարին պիտի դործադրէ:

Փարիզ 28 ապրիլ.

Ներկայ տարւոյս առաջին եռամսին
մէջ պետութեան դանձու հասցիներն
խառնուած է 4 միլիոն պակաս է:

Վեհապետին թէ Շանայի կողմը
վերադառնալու է:

Սուլթան Զոհրաբին բաժանորդաց ընդ-
հանուր ժողովը յանձն 2-ին պիտի դու-
սարի: Կարծիք կայ թէ ժողովը Պ. Տը
Լեւոնի համարի պիտի դառնայ:

Լեւոն 28 ապրիլ.

Տօն Բարբաթի մէջ գործակալն եկած
է հոս փոխադարձութիւն մը կը քննարկ-
ուի և քաղաքացիական պաշտօնակա
պաշտօնակա համար:

Լեւոն 28 ապրիլ.

Պոլս. 42 1/4
Փոլս. 42 1/4
1863 64 1/2
1869 64 3/4
1874 64
1872 70 1/2
Անգլ. 92 1/2 13/16

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

Կայսերական հրամանաւ:
Պոլսի իւրաքանչիւր անգամի նախա-
գահ Զոհրաբին և իւրեք ծառայողներ
նախաժամանակարար անուանեցաւ
փոխանակ չիւնէր իրաւունք, որ ծո-

վախալութեան վարչական խորհրդին
նախագահ անուանեցաւ: Իսկ ծովա-
կալութեան ատենին նախագահ ան-
ուանեցաւ Զիւնի իրաւունք:

Երեկ Մեմլուկի տօնին առթիւ
վեհ. Սուլթանը հանդիսիւ թօյնհա-
նէի միջոցով գնաց և հոն կատար-
ուած կրօնական արարողութեանց
ներկայ դասուեցաւ:

Այս պատճառաւ կառավարու-
թեան պաշտօնակարները դոյ էին ե-
րեկ:

Պետական խորհրդոյ նախագահ
Բարձր. Գուրուշ վաշտն երեքշաբթի
օրը և Պոլս հասաւ Աղէքսանդրիա-
յէն և նոյն օրը վեհ. Սուլթանին
ներկայանալու պատիւ ունեցաւ:

Նոյն օրը Աւստրիոյ նորընտիր
գեներալ Զիւնի կողմը հանդիսիւ կայ-
սերական պալատին երթալով, իւր
գեներալական վկայագրերը մատուց-
վեհ. Սուլթանին. յետոյ Բ. Գուրուշ
երթալով այցելութիւն տուաւ Մեծ
Եղարքոսին և Արտաքին գործոց նա-
խարարին: Քիչ մը ետք ալ անոնց փո-
խարար Զիւնի այցելութիւնն ընդունեց:

Փոքր Ասիոյ մէջ սոյնի օր քան
դոր ծանրանալուն լուրերը մայրաքա-
ղաքի հասնելուն վրայ, Բերայի եւ
Ղալաթիոյ եւրոպացիներն ալ հան-
դանակութիւն մը բացին և արդէն
100 պարսիկ ալիւր զինուորին էնկիւրի:
Աւստրիական լոյսի շողեւնաւոր գոր-
ծակալութիւնն ալ այս ալիւրը ձը-
րիտուէն ինքնապիւղ զինուոր:

Բ. Գուրուշ Էնկիւրիի, Սուլթանի եւ
Գաւառի միջոցով կուսակալաց առաջար-
կութեամբ օգնութեան միջոցներ
ստորինեց սովաւանի ժողովրդոց
բաշխուելու համար:

Անցեալ շաբաթ առաւ թուով
ի լոյ ծանուցած էինք թէ Մամուլ
անուն թերթին մէջ հրատարակեալ
նախատախան անաւորադիր նամակի
մը դէմ դատ բացուելով, Մամուլ
խմբագիրը նամակին հեղինակը մատ-
նել և վերջինը 3 լիւր տուգանքի
գատապարտուել է:

Այս լուրին մէջ սխալ մը կայ,
զոր արդարութեան պարտք մը կը
համարենք ուղղել:

Նամակն անաւորադիր չէ եղեր,
այլ Գուրուշ փախուելու ստորագրու-
թիւնը կը կրէ եղեր, և գատախան
ալ ուղղակի ստորագրութեան տի-
րոջ դէմ դատ բացուել է ոչ Մամ-
ուլ խմբագիրն ոչ: Հետեւեալը
Մամուլ խմբագիրը չիւնար մասնա-
ւոր նամակագիրը:

ԿՈՍՏԱՆԴՆՈՒՊՈԼԻՍ

ԵՍՏԱՅԸ ՈՒՄՈՒՄԻՆ

17 ապրիլ. Խորհրդարանի իրիկուն 46, 25

18 »	Հինգշաբթի առաւուս	46, 26
	Բացուեցաւ	46, 27
	Կէս օր	
	Կ. Պոլս 17 ապրիլ	
Սոսիէթէ Ժէնէրայի բաժինը	Անգլ. փո.	5, 25
« Փոխանակութեան »		3, 25
Կ. Պոլսոյ Պանքային »		4, 20
Քրէտի Ժէնէրայ »		7, 40
Քրէտի Սթրո-թիւրք »		4, 50
Երկաթուղեաց հիւն	Ֆր.	99
	նոր	72, 23
Փոխ. 1863		316
» 1863		316
» 1869		254 1/2
» 1872		69 1/2
Փոխ. 1873		
Թրամուշ	Օսմ. փո.	5, 40

ԸՆԹԱՅՐ ԴԱՄԱՐՈՅ	
17 ԱՊՐԻԼ	
Անգլ. փո.	414
Նաւթի փո.	88
Ինքնապիւղ փո.	90
Գրքերի փո.	54, 20
Հիւն փո.	
Հիւն փո.	403
Պոլսի փո.	423

Ա. Զ. Գ. Ա. Յ. Ի. Ն.

Կը լսենք թէ երեկ դուստրուած
Խառն ժողովը Տեղապահ Սրբադա-
նին և Գաղ. ժողովոյ ատենապետ
Մաքսուտեան վսեմ. Սիմոն պէյին
յանձնել է Պէշիկթաշի գեներալմանա-
տան խնդրոյն վրայ վեհ. Սուլթանին
կամայ և աղբիւր իրաւանց համեմատ
որոշում մը յառաջ բերելու վրայ
բանակցել որոյ հետ որ անի է, և ա-
յտ Խառն ժողովոյ որոշման ներկա-
յայնել:

Մայրաքաղաքի Պարսկական գե-
նալ վսեմ. Մոհամմէ Խան երեքշաբ-
թի օրը Պարսկաքաղաքի գաւառի այ-
ցելութիւն տուաւ տեղապահ Սըր-
բադանին:

Նոյն օրը Տեղապահ Սրբադանը
Մեծ-Եղարքոսին հրաւիրուած ըլ-
լալով Բ. Գուրուշ գնաց, բայց Նորին
Բարձրութիւնն արդէն մեկնած ըլ-
լալուն չկրցաւ տեսակցել:

Անկէջ Ռաիկանութեան նորընտիր
նախարար վսեմ. Հիւսնի փաշային
այցելութեան դնաց և արժանապա-
յիւ պատուով ընդունուեցաւ:

ՊԱՏՐԱՐԱՐԱՆ ԸՆԴՈՒՄԻՆ

Վաղը դուստրուելիք Ընդհ. ժողո-
վոյ համար Երեսփոխանաց ուղղեալ
հրաւիրագրին մէջ նախորդ ատենա-
դրութեանց և նորընտիր երեսփո-
խանաց վաւերացման և Դիւանի ան-
գամայն ընտրութեան խնդիրներէն ե-
տե Պարսկաքաղաքի ընտրութեան
խնդիրը կը տեսնուի:

Ընդհ. ժողովոյ նախընթաց (մարտ
22) նստին, այս խնդիրն առաջին
էր խնդրոց կարգին մէջ, բայց ինք-
ընդին ձախակողմեան անուանող

ՊԱՅՄԱՆՔ

Դուրս գացած լրագրաց հանրա-
ժարքը խմբագրութեան վրայ
Լրագրոյս վերաբերեալ նամակ
կամ որ եւ իցէ գրութիւն խմբագիր
— Տնօրէնին պիտի ուղղուի, և Պո-
լս, Չիքիլի Խան, Մարտի գրասեն-
եակը:
Համար ծախքը չվճարուած նա-
մակ չընդունուիր:

Երեսփոխանը Սահմանադրութեան
վերաքննութեան խնդիրն առաջ ան-
ցունել և Պարսկաքաղաքի ընտրու-
թեան խնդիրն ետ թողուլ ջանացին:
Այնպէս անուանեալ երեսփո-
խաններէն շատեր ալ Պարսկաքա-
ղաքի ընտրութեան խնդիրն ետ ձը-
գելու մասին ձայնակցեցան անոնց,
բայց ոչ թէ Սահմ. վերաքննութիւն
նրն յառաջ անցունելու մտք, վա-
ստի զի, ինչպէս որ իրաւամբ դիտու-
ղութիւն ըլլաւ Գաղ. ժողովոյ իւրա-
նը, Սահմ. վերաքննութեան խնդիրը
որ չորս տարիէ ի վեր կը յաղուի և
գեռ լուծուած չէ, մէկ երկու և գու-
ցէ տասն նստի մէջ լուծուելուն ոչ
ուր կրնայ երաշխաւորել այլ այս վեր-
ջինները պահանջեցին նախ ընդհ.
ժողովն իր կատարեալ օրինաւորու-
թեան և կանոնաւորութեան վիճա-
կին մէջ դնել և ապա Պարսկաքա-
ղաքի ընտրութեան և Սահմ. վե-
րաքննութեան մեծ և կենսական խն-
դիրներուն ձեռնարկել: Այս դիտու-
ղութիւնը կամ առաջարկութիւնը
նոյն լակ ձախակողմեանց ոմանց կող-
մէ արձագանք գտնելով և ընդգի-
մաւոր ալ չունենալով, դիւանին
կողմէ նկատուեցան անուանեցաւ:

Չախակողմեանը կը պնդէին որ
Սահմանադրութեան վերաքննութիւն
նրն աւարտելէ առաջ Պարսկաքա-
ղաքի ընտրութիւն ընելը ծանր ան-
պատեհութիւններ կրնար ունենալ:
Գանի որ վերաքննութիւնը չէ աւար-
տած, կըսէին, նորընտիր Պարսկաքա-
ղաքի ընտրութեանց ինչ ըլլալը գեռ
յայտնի չէ, և եթէ յայտնի ալ ըլ-
լայ, աղբիւն ընդունուած և տէրու-
թեան վաւերացած չէ:

Այս և ուրիշ ատենց պէս աւար-
կութիւններ ընելով ձախակողմեանը,
վերաքննութեան խնդիրն յառաջ ան-
ցունելու վրայ պնդեցին: Բայց իրենց
դէմ ելած առաւելութիւններէն,
Գաղ. ժողովոյ հրաժարման հետեւան-
քէն և աշակղմեանց մեծ մասին ալ
լուռ կենալէն կատարեալ իրենց վե-
րաքննած Սահմանադրութիւնը ներ-
կայացնելու խորհրդէն ետ կեցան,
և առաջարկեցին որ ընդհ. ժողովոյ
առաջնականաց կերպիւր փոփոխած
քանի մը կէտերը վարչութեան ձեռ-
նք ան յապաղ Բ. Գուրուշ վաւերա-
ցնել արուին, և անմիջապէս յետոյ
Պարսկաքաղաքի ընտրութեան ձեռ-
նարկուի:

Այս առաջարկութիւնն ալ սա-
տիկ ընդգիմութեան հանդիպեցաւ
աշակղմեանց ոմանց կողմէ: Ասանք
պահանջեցին որ այն փոփոխեալ կէ-

տները նախ դրի առնուելով ընդհ. ժողովոյ ներկայացուին, որպէս զի ժողովը տեսնէ, և եթէ այն փոփոխութիւնները բաւական համարելով վերջեական կերպիւ հաստատէ, և ուրիշ վերաքննելի կարեւոր կէտեր չդառնելով կամ չառնելով Բ. Գրան վաւերացմանը ներկայացնել որոշէ, այն ժամանակ միայն յանձնուի վարչութեան :

Այս օրինակով առարկութեան դէմ ձայնակողներէն ոմանք՝ ըստ իրենց հանապազօրեայ սովորութեան՝ ազգային բաժնաւորի և ներկայ դատաւոր ժողովուրդն ալ ստանց այս ընթացքին դէմ դժգոհութեան ձայներ հանելով՝ առեանք չիփօթեցաւ, և ժամանակն ալ անցած ըլլալով ժողովականքը յրուեցան :

Այս իրողութենէն ալ կը տեսնուի թէ Սահմ. վերաքննութիւնն ինչ ձևով և ինչ սահմանի մէջ ալ ընելու գոյնի և դիւրաւ և շուտով լինելու գործ չէ, և դարմանողի բան մ'ըսած չենք ըլլար՝ եթէ բանք թէ ժողովին ներկայ ընթացքին և տրամադրութեանը նայելով, չյուսացուիր որ մէկ երկու տարիէն առաջ լինայ :

Ինչ ընելու է ուրեմն. սպասելու է տարիներով, Պատրիարքի ընտրութիւն ընելու չէ՞, տեղապահո՞վ մնալու է : Այո՛, կրնն ունենք և կը յարեն թէ առանց Պատրիարքի մնալը Սահմ. վերաքննութիւնը չաւտով կատարուի ինքնին մը կըլլայ :

Ըստ մեր կարծեաց, քանի որ հիմա սահմանադրութիւն մ'ունինք ձեռք ունին, որ թէ և վերաքննութեան կարգաւ և վերաքննութեան ներքեւ, այսօրուան օրս ազգին օրէնքն է, պէտք է այդ օրէնքով վարուիլ մինչև որ վերաքննութիւնն աւարտի և նոր Սահմանադրութիւնը Բ. Գրանէն վաւերանալով գործադրութեան դրուի :

Պատրիարքը պէտք է ներկայ Սահմանադրութեան վրայ ուխտէ : Ընդհ. ժողովով փոփոխեալ կամ վերաքննեալ կեանքն ալ ընդունելով, զի ուխտը նիւթական տետրակին կամ թուղթին վրայ չէ, այլ ազգին որոշած, ընդունած և հաստատած օրինաց տրամադրութիւններուն վրայ է, ուրիշ կերպ խորհիլն և քննելը պարզապէս խնամակութիւն է :

Պատրիարք մը, եթէ որտեղ մէջ խիզճ ունի, ազգասիրութիւն ունի, անկեղծութիւն ունի, պարտեաց ըզգացում ունի, ազգին ընդունած ու հաստատածէն մտալու չափ չչեղիր : Իսկ եթէ այս կարեւոր հանդամանքները չունի, անոր ըրած ուխտին ալ չենք կրնար վստահիլ Սահմանադրութիւնն արդէն իր մէջը վերաքննութեան յօդուած մ'ունի : Պատրիարքն ամբողջին վրայ ուխտած ժամանակ այն յօդուածին վրայ ալ ուխտած կըլլայ : Ըսել է որ կանխաւ կընդգուծուի վերաքննութիւնը, կուզէ հինգ տարին ըլլայ, կուզէ երկու տարիէն, կուզէ վեց ամիս : Ասկէց զատ, Սահմ. վերաքննիչ յանձնաժողովն իր ծրագրին մէջ վերաքննութեան պայմանաժամը վերցուցած է, այնպէս որ ընդհ. ժողովը, եթէ պէտք տեսնէ, երեք ամիսն անդամ մը և գուցէ իսկ ամեն ամիս Սահմանադրութիւնը կընայ վերաքննել ու մէջը փոփոխութիւններ ընել :

Արդ քանի որ այսպէս կուզեն այդ ձայնակողներն էֆէնտիները, ծիծաղելի հակասութիւն մը չէ՞ ելնել ուխտի խնդրոյն վրայ այնչափ բժականութիւն ընելին, երբոր իրենք Սահմանադրութիւնը հանապազօրեայ փոփոխութեան վիճակի մէջ դնելու կուզեն :

Մեր ըսինք և դարձեալ կրննք, Պատրիարքը պէտք է ուխտէ ճշդիւ գործադրելու այն օրէնքներն ու կանոնները, զորս ազգն ընդունած է և կոնգրեսի, հաստատած է և կը հաստատէ :

Եթէ ընդհ. ժողովոյ որ և է մէկ որոշումը կընայ Պատրիարքը մերժել և չգործադրել առանց Պատրիարքութեան ինչպիսի կամ հրաժարելու : Գրիշ բան է եթէ որոշման մը դէմ դիտողութիւն մ'ունենայ. այն ժամանակ կամ ընդհանուր ժողովը Պատրիարքին դիտողութիւնը բանաւոր և արդար գտնելով իր որոշումը կը չափաւորէ, կամ Պատրիարքը կը հրաժարի :

Արդ՝ քանի որ այսպէս է, քանի որ ընդհանուր ժողովոյ որոշումը, և անոր հաստատած կամ ընդունած օրէնքը պիտի իշխէ ազգային գործոց մէջ, և քանի որ Պատրիարքն ալ այն որոշմանց և օրինաց համեմատ վարուելու հորինելու մէջ է, ինչ կայ սրբեմն վախճալու . . . :

Բայց կայ ուրիշ վախճալու բան մը, մեծ և ծանր վտանգ մը, որոյ համար հարկ եղած զգուշութեան միջոցները ձեռք առնելու պարտաւոր են ազգը. այն է անիշխանական սղին, որ դժբաղդաւոր օր քան զօր կը տարածի աղէկն մէջ քանի մը խռովայոյց և շահատէր անձանց չընտրել : Եթէ վտանգ մը կայ Սահմանադրութեան, այդ սղինն է, վտանգի այդ սղինն ոչ մէկ բանէ չախտածիր : օրէնք, իրաւունք, պարտք չը ճանչեր, ամեն բան տաւթուր կը կոխէ :

Եթէ այդ սղինն չէ՞ որ յուլիս 31ին ազգային վարչութեան ժողովատեղին կոխելով, Օրագրոյ Լէնկիթիմուր անուանած ֆաղ. ժողովոյն անդամները նախատեց ու հարուստացնելու պարտքը : Այդ սղինն չէ՞ որ ընդհանուր ժողովոյ դռները բռնաբարեց : այդ սղինն չէ՞ որ ազգին իրաւունքը կապտելով, առանց ընդհ. ժողովոյ դիտութեան և որոշման Պատրիարք մը տապալեց, և ազգին երեւոյթականութիւնը լի անաւանական և կեղծ գիրքի մը մէջ ձգեց : Ասոնք Սահմանադրութեան հարուստ չեն. օրինաց բռնաբարութիւն չեն :

Ո՞վ կրնայ երաշխաւորել թէ այս սուհետեւ ալ չպիտի ըլլան այդ բռնաբարութեանց փորձերը : Ո՞վ կըրնայ երաշխաւորել թէ նոր ընտրութեան ժամանակ Պատրիարքը քանի մը խռովայոյց անձանց մեքենայութիւններուն զոհ չպիտի երթայ, եթէ անոնց կամայն և հաճոյցը գործիք չըլլայ :

Ահա վտանգը, ահա վտանգաւոր բանը. ասոր վրայ պէտք է խորհիլ այն անիշխանական մեքենայութեանց, բռնութեանց և ապօրինութեանց առաջը պէտք է առնուլ, եթէ կուզենք իրօք և սչ լի խաղով յարգել Սահմանադրութիւնը, և ինքզինքնիստ ժողովուրդը միանգամայն չխաբեր :

ՕՐՈՒՍԸ ԽՆԴԻՐՆԵՐ

Օրագիր կըսէ թէ Ամենքս միանալով վեհ. կաթողիկոսին հետ բողոքելու ենք այս մասին : Ուրեմն Ս. կաթողիկոսը կամ բողոքած է կամ պիտի բողոքէ. եթէ բողոքելէ չվախնար, հոս Ազգային Պատրիարքարանին ինչու ազգարարութիւն մը չը գրելու, ընդհ. ժողովոյն պաշտօնական տեղեկութիւն մը չտար, մենք ինչէն գիտնանք թէ սաղոգ է այդ գրաւման լուրը, քանի որ տեղէ մը պաշտօնապէս հաղորդուած չէ : Իսկ եթէ Ամեն. տեղապահն այդպիսի գիրք մը ստացաւ և այնպէս գնաց յանուն Տաճկաստանի բոլոր Հայոց ցաւ յայտ :

նեց դեպքանին, պէտք էր առաջ այդ տեղեկութիւնն ընդհ. ժողովոյն հաղորդել, և անոր կողմանէ գընալով առ դեպքանին, արդարեւ յանուն Տաճկաստանի ընդհ. Հայոց ցաւ յայտնած ըլլար : Բայց չիտեսնք տալիս թէ իրօք Տեղապահ Սըրբազանն ստուգած է այդ լուրը, կամ ինչ կերպարանքով յայտնած է գեապանին. գուցէ միայն Չառիկ չընտրահարելու գնացին ու դարձան : Օրինաւոր կը թուէր որ Պատրիարքարանը պաշտօնական կերպիւ տեղաւոր Սուրբ Էջմիածնէն և տեղեկութիւն տար Պօլսոյ ժողովոյ և ժողովրդոց :

Մենք հոս մեր գիտցածը կուզենք գրել, ոչ իբրեւ նոր բան, այլ իբրեւ տեղեկութիւն Ռուսաստանի Հայոց դպրոցներուն վրայ՝ որքան որ մեզ յայտնի է :

Ռուսական Հայաստանի մէջ մեր ազգին դպրոցները՝ որք սոսկ ազգային են, կը կոչուին հոգեւոր դպրոց. ասոնց թէ՛ նիւթականին և թէ՛ բարոյականին տեսլութեանը կառավարութիւնը չը խառնուիր. կան նաեւ ծխական անուանեալ դպրոցներ ալ, որք գեղեցու և թաղերու եկեղեցեաց մէջ կամ կից կը գտնուին. ասոնք ալ նախակրթարան ըլլալով, կառավարութիւնն ասոնց ալ չէր խառնուեր : Բայց Ռուսիոյ տէրութիւնն իր ծախքով և տեսլութեան ներքեւ գաւառական և նահանգական ուսումնարաններ ունի գրեթէ ամեն քաղաքի մէջ, որոց ծախքն ինք կը հոգայ, և որոց մէջ ամեն կարգէ և կրօնքէ աշակերտներ կընդունին, ուր Պրօկրատին մէջ գտնուած ուսմանքներն իբրեւ տեղական բարձր կարգի ուսմանք կուսանին, և այս ուսումնարանաց մէջ ամեն ուսմանք ուսական լեզուով կաւանդուին. սա կայն իւրաքանչիւր լեզուի ու կրօնքի համար ալ նոյն ազգէն ուսուցիչներ կան :

Այդ, այս նահանգական և գաւառական ուսումնարաններն արդէն ազգային չեն. իսկ եթէ այժմ գըրաւել ուղուածները մեր հոգեւոր կամ ծխական ուսումնարաններն են, ասոնց համար բացայայտ տեղեկութիւն պէտք է : Հոգեւոր դպրոց է Ս. Էջմիածնայ դպրոցը, Տփլիսոյ Ներսէսեան դպրոցը, Ղարապաղի, Երեւանայ, Աստարիանայ, Նախիճաւայ և Շամախու դպրոցները : Այս վեց թեմին բաժնուած է Ռուսաստանի Հայոց վիճակաւորութիւնը կամ առաջնորդութիւնը : Ասոնք ունին իրենց ներքեւ գանազան նահանգներ ու քաղաքներ, ուր փոքր առաջնորդներ կը նստին իբրեւ փոխանորդ վիճակաւորին, և յաջորդ կը կոչուին. զորօրինակ, Տփլիսոյ կամ վրաստանի առաջնորդին յաջորդները կը նստին Գանձակ, Գորի և այլ քաղաքները : Երեւանայ Առաջնորդին յաջորդները կընստին Արարիկ, Հին Նախիճաւ, և այլն : Եւ այսպէս իւրաքանչիւր վիճակաւորաց և յաջորդաց գտնուած տեղերը հոգեւոր դպրոցներ կան և կը կառավարուին անոնց տեսլութեան տակ : Ինչպէս նաեւ Ալեքսանդրապոլ, Ալաւերդէի, Ախլաթիայ և այլն :

Այս դպրոցներուն տրամադրութիւնները կը տեսնուին նոյն իսկ մեր չընդունած Պարթէնիային մէջ. այն Պարթէնիային, որոյ « ի նախադադարաբար իսկական ձեռամբ Նորին Կայսերական մեծութեան մակադքրեալ է Եղեջն Էփ. Խաչ » իսկ թաղերու և գիւղերու ծխական դպրոցաց համար ալ ոչ միայն նախորդ կաթողիկոսներ, այլ և այժմ Ս. Տ. Գեորգ կաթողիկոսն ալ յատկապէս ջանք և

խնամք ցոյց տուած էր, կայսեր հետ տեսլութիւն ընելէ վերադառնալուն օր քաղաք կամ նահանգ որ պատահած էր և մինչև ցայսօր, ինչպէս որ կըդրէ Էջմիածնի Արարապոլ, Ռուսիոյ տէրութեանն ոչ ազգարարութիւն մը և ոչ խախտ մը տեսնուած էր անոնց համար : Իսկ եթէ այսօր իրօք այդպիսի բան մը կայ, իրաւունք և կարողութիւն ունի վեհ. կաթողիկոսն ինքնին բողոքել՝ նոյն իսկ կայսեր շնորհած արտօնութեանց յետևով :

Իսկ եթէ Թեոդոսիոյ Խաչիպեան վարժարանին գրաւման համար է Օրագրի աղաղակը, այն շատ հին բան է, և գրաւուած ալ չէ, այլ ընծայուած : Աստուած ողորմի ընծայողին հոգւոյն :

Ճշմարիտ է, որ Կ. Պօլսոյ ազգային քն. մեծ և նուիրական խնդիր համարելու ենք այսպիսի խնդիրները, որք մեր ազգին ներկային ու ապագային նիւթական և բարոյական կեանքն ըսել են : Ճշմարիտ է նաեւ որ մեր ընդհ. ժողովն իրեն համար առաջին պարագ և գործք ընելու է ազգային կրթութեան և վարժարանաց խնդիրները : Բայց զբժիշկ, բժշկիչ եւ նախ զանձն քոս : Ահա քոս դպրոցներդ աղաւ են և ազգային. ապա հովիւնցած են անոնց նիւթականը. հոգ ունին անոնց ներքին չէնք, այն է ազգայինին, կրօնականին, կամ օգտակար դիտութեանց ու բարոյականի դասերուն և դաստիարակութեան : Այդպիսիք կը կալմես, Ռուսական խորհուրդ ունի, վարժարանական ժողով կայ, բայց արդիւնք մը :

Կ. Պօլսոյ ընդհ. ժողովն և Պատրիարքարանն ինչու իրեն գործ չընեն փարիզու Մուրատեան վարժարանին խնդիրը, որ շատ մեծ խնդիր է, և որուն ձեռնհասութիւն և դիւրութիւն ունի, եթէ խոհմեմութիւն և կամը ունենայ :

Եթէ, Աստուած մի՛ արտօցէ, իւրաւ ըլլայ Ռուսիոյ մէջ մեր դպրոցներուն գրաւումը, Ռուսիայեան Հայոց արթն ու մարմն մեզնէ առաջ կը փութայ և դիտէ ազգին իրաւունքները պաշտպանել. քանզի քով օրէնսդէտ և իմաստուն մարդիկ ունինք հոն, որոնց ամեն մէկը մեր հարկը կը կշռեն իրենց ազգասիրութեամբն ու ազգանդով :

Այս յօդուածին մէջ տեսնուած են թաղերութիւններն անոր համար հարկեցանք ընել, որ այդ լուրը հըրատարակուի առաջին անգամ Օրագիրն եղաւ. և որովհետեւ Օրագիրն ինչ որ գրէ « ենթադրենք թէ է, ենթադրենք թէ չէ » ներսով կը արամբանէ, մենք ալ ենթադրեցինք որ կրնայ ըլլալ թէ աս ալ ենթադրութիւն մ'է, մանաւանդ երբ իրաւացի պատճառներ ունինք սպասելու որ պաշտօնական և հաւանական ազգային լսենք. քանզի Օրագիր ուրիշ իմացած ըլլալ չընեն : Մեր ընտանիքը աղբիւրն Էջմիածնէն է, ուրիշ վեհ. Ս. կաթողիկոսն իրաւունք և պարտք ունի յայտարարել թէ՛ Տաճկաստանի և թէ՛ ուրիշ տէրութեանց մէջ գտնուած Հայոց, միանգամայն իրաւունք և պարտք ունի ներկայացնել և անձամբ ալ ներկայանալ այս խնդրով նոյն իսկ Ռուսիոյ կայսեր, եթէ նոր և կայսերական արտօնութեանց հակառակ իրողութիւն մը կայ իրօք :
